## ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ
## (Մենդյան 100-ամյակի առթիվ)

ԹԻԿԱՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ

1978 թ. հոկտեմբերի 13-ին լրացավ պրոֆեսիոնալ հեղափոխական, կոմունիստական կուսակցության և սովետական պետության ականավոր գործիչ, հայ ժողովրդի պանծալի զավակ Ստեփան Գևորգի Շահումյանի ծննդյան 100-ամյակը։ Ստ. Շահումյանը Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտն ու մերձավոր զինակիցն է, մարքսիզմ-լենինիզմի գաղափարների իրականացման համար մղված պայքարի քաջամարտիկ, միջազգային բանվորական շարժման նշանավոր դեմքերից մեկը, ժողովուրդների բարեկամության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի մեծ ջատագով։ Գ. Կ. Օրջոնիկիձեի պատկերավոր բնութագրությամբ նա «տեսական մարքսիզմի ծանր հրետանին էր»[1]։ Սովետական ժողովուրդը, միջազգային պրոլետարիատը ակնածանքով են հիշում և մեծարում կոմունիզմի գործի համար անվեհեր մարտընչած Ստ. Շահումյանին։

Սերունդները ժամանակի ծնունդ են։ Ստեղծագործական անխոնջ ու լարված պայքարով է վեր խոյանում կոմունիստական հասարակարգի հոյակապ շինքը, որի կառուցմանը սովետական ժողովրդի յուրաքանչյուր սերունդ ներդնում է իր ծանրակշիռ ավանդը։ Ստ. Շահումյանը սովետական բաղմաղգ պետության առաջին կառուցողներից է, ինչպես ժամանակակիցներն էին նրան կոչում՝ Կովկասի Լենինը։

Ստ. Շահումյանի կյանքն ու հեղափոխական գործունեությունը սերտորեն կապված են Ռուսաստանի հեղափոխական շարժումների և կոմունիստական կազմակերպությունների պատմության հետ։ Անցյալ դարի 90-ական թվականներից սկսելով իր հեղափոխական գործունեությունը, Ստ. Շահումյանը Վ. Ի. Լենինի մյուս հավատարիմ աշակերտների հետ միասին անսպառ եռանդով պայքարել է բոլշևիկյան կուսակցության մարտական ջոկատներից մեկի՝ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծման ու ամրապնդման, երկրամասում սովետական կարգերի հաստատման համար։

Լինելով բոլշևիկյան կուսակցության ղեկավար կորիզում, զինված մարքս-լենինյան տեսությամբ, Ստ. Շահումյանը միշտ բարձր է պահել անձնվեր լենինյանի վսեմ կոչումը։ Նա աշխատավոր մասսաների տաղանդավոր կազմակերպիչ էր, աչքի ընկնող ժուռնալիստ-հրապարակախոս, հայ հասարակական-քաղաքական մարքսիստական մտքի լենինյան փուլի նշանավոր տեսաբան, գիտական կոմունիզմի, հեղափոխական մարքսիզմի աչքի ընկնող պրոպագանդիստ։ Նա պատկանում է բանվորական հեղափոխական շարժման այն առաջնորդների համաստեղությանը, որոնց մասին Վ. Ի. Լենինն ասել է. «առանց «մի տասնյակ» տաղանդավոր (իսկ տաղանդները հարյուրներով

---

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 98։

չեն ծնվում) փորձված, պրոֆեսիոնալ կերպով պատրաստված և ուսուցման երկարատև դպրոց անցած առաջնորդների, առանց հիանալի կերպով միմյանց համամիտ առաջնորդների, անհնարին է ժամանակակից հասարակության մեջ որևէ դասակարգի տոկուն պայքարը»[2]։

Ստեփան Գևորգի Շահումյանը ծնվել է 1878 թ. հոկտեմբերի 13-ին (1-ին) Թիֆլիսում։ Նախնական կրթությունն ստացել է երկրամասի կենտրոնում։ 1889—1898 թթ. սովորել է Թիֆլիսի ռեալական ուսումնարանում, գործուն մասնակցություն ցուցաբերել աշակերտական ընդհատակյա խմբակներին, երկրամասի հեղափոխական շարժումներին, պայքարել ցարական ինքնակալության դեմ։ 1898 թ. կապվելով Անդրկովկասի անդրանիկ սոցիալ-դեմոկրատների և Կովկաս արտաքսված ռուս մարքսիստների հետ, նա եռանդուն կերպով ուսումնասիրում է Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Ի. Լենինի աշխատությունները, զինվորագրվում լենինյան կուսակցությանը։

1898 թ. Ստ. Շահումյանն ավարտում է ռեալական ուսումնարանը և ընդունվում Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտ։ Տնտեսական ծանր պայմանների պատճառով նա ժամանակավորապես թողնում է ուսումը և վերադառնում Կովկաս։

Ստ. Շահումյանը 1899 թ. Ջալալօղլիում (Ստեփանավան) հիմնադրում է Հայաստանում առաջին մարքսիստական խմբակը, որը մեծ դեր խաղաց հայ աշխատավորության մեջ մարքսիզմի գաղափարների տարածման ու հաստատման, լենինյան-իսկրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ստեղծման, Հայաստանում հեղափոխական շարժումների ծավալման գործում։

Աննկուն լենինյանը 1900 թ. կրկին ընդունվում է Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիական ֆակուլտետը։ Սովորելու հետ միասին նա նետվում է հեղափոխական պայքարի հորձանուտը։ Նրա այդ տարիների գործունեության մասին «Լատվիական ՍՍՀ պատմություն» գրքում ասված է. «Ռիգայի իսկրայական կազմակերպություններում ակտիվ աշխատել է պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող Ստեփան Շահումյանը... Ստեփան Շահումյանը հանդիսացել է ՌՍԴԲԿ Ռիգայի կազմակերպության անդամ, ինստիտուտում կազմակերպել է մարքսիստական անլեգալ «Թեորետիկ» խմբակը»[3]։

1900 թ. օգոստոսի 2-ին Ռիգայից իր հարազատներին ուղարկած նամակում Ստ. Շահումյանը գրել է. «Ես, բացի պոլիտեխնիկումի համար պատրաստվելուց, պարապում եմ և ուրիշ առարկաներով։ Հիմնավոր կերպով ծանոթացա բանվորական շարժման հետ, այն հասարակական շարժման հետ, որ կրում է սոցիալիզմ անունը»[4]։

Երիտասարդ Ստ. Շահումյանը ամենահեղինակավոր, ազդեցիկ և հարգված մարդն էր Ռիգայի այն ժամանակվա հայ ուսանողության մեջ։

Ռիգայի մարքսիստական «Թեորետիկ» խմբակը, որի կազմում էին Ստ. Շահումյանը, Ա. Ադելյանը (Դանիելյանցը), Ն. Փիրումյանը, Ի. Հարությունյանը, Վ. Սիմոնյանը, Վ. Պարոնյանը և ուրիշներ, լուրջ հարվածներ հասցրեց բուրժուա-ազգայնական «Սևան» միությանը և նրա շուրջը համա-

2 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, էջ 153—154։
3 «История Латвийской ССР», т. II, Рига, 1964, էջ 265։
4 Ստ. Շահումյան, Նամակներ 1896—1918, Երևան, 1959, էջ 250։

խմբվածներին։ «Ոչ միայն հայ, այլև մյուս ազգություններին պատկանող ուսանողների շրջանում տարվող մարքսիստական աշխատանքի հոգին ընկեր Ստեփան Շահումյանն էր»,— վկայում է նրա Ռիգայի ուսանողական դասընկեր Ն. Փիրումյանը[5]։

Ռիգայում լենինյան «Իսկրա»-ի ազդեցությամբ Ստ. Շահումյանը հեղափոխական կոչեր է գրում և տարածում, Մոսկվայի, Պետերբուրգի, Կիևի, Խարկովի, Բաքվի, Թիֆլիսի և այլ քաղաքների հեղափոխական ուսանող երիտասարդության հետ մերձավոր կապեր է հաստատում, ակտիվ միջոցառումների է դիմում իսկրայական ուղղության հայերեն թերթ հրատարակելու համար։ Նա Կովկասի բազմազգ բնակչությանը, նրա զավակներին կոչ էր անում «միավորվել գալիք ռուսական հեղափոխության դրոշի ներքո»։

Ռուսական հեղափոխական միջավայրը վերջնականապես որոշում է Ստ. Շահումյանի կյանքի ուղին։ Զինված մարքսիստական աշխարհայացքով, նա քաղաքական մկրտություն է ստանում, իր իսկ բառերով ասած «ռուսաց նորագույն հեղափոխական ավազանում»։

1901—1902 թթ. Ստ. Շահումյանը ակտիվ մասնակցություն է ունենում Ռուսաստանի հեղափոխական ուսանողության շարժումներին ու համագումարներին։ 1902 թ. փետրվարին, որպես Ռիգայի ուսանողության պատգամավոր, նա մասնակցում է Պետերբուրգում գումարված ուսանողության համառուսաստանյան առաջին համագումարին, հանդես է գալիս փայլուն ճառով, ուր հայտարարում է, թե անիրագործելի են բոլոր տեսակի վառ ձգտումները, համալսարանական աղատություններր, ...մինչև որ չխորտակվի քաղաքական գլխավոր խոչընդոտը, այն է՝ ցարիզմը»[6]։

Վերադառնալով համագումարից, Ստ. Շահումյանը փետրվարի 11-ին մի քանի այլ ուսանողների հետ միասին գլխավորում է Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտում բռնկված ուսանողական խոշոր դասադուլը, որի պատճառով էլ նրան հեռացնում են ինստիտուտից և վարչական կարգով արտաքսում Թիֆլիս։ Այստեղ նա անմիջապես ներգրավվում է Անդրկովկասի լենինյան-իսկրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեության մեջ, դառնում նրանց աչքի ընկնող ղեկավարներից մեկը։ Ուսումնառությունը Թիֆլիսում, Ռիգայում և ապա Բեռլինում, աշակերտական ընդհատակյա «Միածան» և այլ խմբակներին ունեցած ակտիվ մասնակցությունը, մարքսիստական աշխարհայացքի ձևավորումը երիտասարդ Ստ. Շահումյանին հեղափոխական տրամադրություններով տոգորված ուսանողից դարձնում են լենինյան կուսակցության հիմնադիրներից մեկը։

XX դ. սկզբին ռուսական հեղափոխական շարժումների ազդեցության տակ Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններում՝ Բաքվում, Թիֆլիսում, Քութայիսում, Ալեքսանդրապոլում և այլ վայրերում լայն թափ է ստանում բանվորների և աշխատավոր գյուղացիների պայքարը։ Ինչպես այդ տարիներին, այնպես էլ հետագայում, հեղափոխական շարժումները գնալով ծա-

---

5 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ արխիվ), ֆ. 7։

6 Ար-Մեն [Արշավիր Մելիքյան], Հիշողություններ Ս. Շահումյանի մասին («Նոր աշխարհ», 1922, սեպտեմբեր, էջ 155)։

վալվում են, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի գաղափարները թափանցում են Հայաստանի քաղաքներն ու գյուղերը։

Ստ. Շահումյանը ընդամենը 24 տարեկան էր, երբ 1902 թ. Բոգդան Կնունյանցի, Արշակ Չուրաբյանի, Սերգեյ Խանոյանի, Աշոտ Խումարյանի, Մելիք Մելիքյանի (Դեդուշկա), Դանուշ Շահվերդյանի, Ռուբեն Դաշտոյանի, Արամայիս Երզնկյանի և այլոց հետ միասին հիմք դրեց Անդրկովկասում առաջին լենինյան-իսկրայական սոցիալ-դեմոկրատական հայկական կազմակերպությանը՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միությանը»։ Նորաստեղծ միությունը ՌՍԴԲԿ տեղական կազմակերպություններից մեկն էր։ «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը», որ 1903 թ. մարտին մասնակցեց ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի հիմնադրմանը, 1902 թ. հոկտեմբերից հրատարակում էր իր տպագիր օրգան «Պրոլետարիատ»-ը՝ լենինյան-իսկրայական ուղղության առաջին հայերեն թերթը։ Նրանում մի շարք այլ ծրագրային հոդվածների հետ միասին տպագրված էր «Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստ»-ը, որը գրել էր Ստ. Շահումյանը։ Մանիֆեստում համառոտակի շարադրված էր միության հասարակական-քաղաքական գործունեության ծրագիրը և նշված էր թե միությունը «Ռուսիայի ամեն ծայրերում իր ցանցերը լայն տարածող Ռուսիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ճյուղերից մեկը լինելով, միանգամայն համերաշխ է նրա հետ, միասին կռվելու է հանուն Ռուսիայի պրոլետարիատի շահերի ընդհանրապես և հայկականի մասնավորապես»[7]։

«Պրոլետարիատ»-ի այս դիրքորոշումը միանգամայն ճիշտ էր։ Ուշագրավ է այն փաստը, որ առաջին լենինյան իսկրայականները, երիտասարդական ավյունով լցված, իրենց հավատո հանգանակում սոցիալիստական գաղափարի իրականացումը հնարավոր էին համարում միայն գոյություն ունեցող ամբողջ կարգի «արմատական հեղաշրջման—սոցիալական հեղափոխության միջոցով, որի անհրաժեշտ նախաբանը պետք է լինի պրոլետարիատի քաղաքական իշխանություն ձեռք բերելը»[8]։

«Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստում ազգային հարցի քննարկման լուրջ փորձ էր արվում։ Դա ռուսական մարքսիստների կողմից ազգային հարցի մշակման անդրանիկ հաջողված փորձերից էր, ազգային հարցի վերաբերյալ Ստ. Շահումյանի առաջին աշխատությունը։ Վ. Ի. Լենինը արտասահմանում ծանոթանալով «Պրոլետարիատ» թերթի, հատկապես «Մանիֆեստ»-ի բովանդակությանը, բարձր գնահատեց նրա դերը պրոլետարական հեղափոխության գործում, ամբողջ հոգով ողջունեց «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստը, մանավանդ ազգային հարցի ճիշտ դրվածքը տալու նրա ուշագրավ փորձը[9]։

Ստ. Շահումյանը կազմակերպչական և պրոպագանդիստական մեծ աշխատանք է կատարում Անդրկովկասի պրոլետարիատի շարքերում, ուղիներ է որոնում հայ աշխատավորության քաղաքական-մարքսիստական դաստիարակության կազմակերպման համար, Բ. Կնունյանցի, Ս. Սպանդարյանի, Ս. Կասյանի և մյուս ընկերների հետ միասին աշխատանք է ծավալում հայե-

---

7 «Պրոլետարիատ», 1902, № 1։

8 Նույն տեղում։

9 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, էջ 133։

լեն մարքսիստական գրականության և թերթերի հրատարակության ուղղությամբ։

Ստ. Շահումյանի մեզ հասած առաջին հրապարակային լուրջ ելույթներից է Ղազարոս Աղայանի գրական-մանկավարժական գործունեության քառասունամյակի առթիվ 1902 թ. մայիսին պատրաստած «Հոբելյանական ճառը», որի մեջ հայ երիտասարդ մարքսիստների անունից նա պաշտպանում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները և շարադրում ցարական ինքնակալության դեմ մղվող պայքարի մերձակա խնդիրները։

1902 թ. աշնանը Ստ. Շահումյանը մեկնում է արտասահման և ընդունվում Բեռլինի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետը, որտեղ որոշ ընդհատումներով դասախոսություններ է լսում մինչև 1905 թ.։ Նա այստեղ դառնում է փիլիսոփայական գիտությունների թեկնածու, պատրաստում է դոկտորական թեզը։ Բեռլինում Ստ. Շահումյանը անդուլ աշխատանք է կատարում ՌՍԴԲԿ արտասահմանյան կազմակերպություններում, մոտիկից ծանոթանում և հաղորդակից լինում Եվրոպայի հեղափոխական շարժումներին, հանդիպումներ է ունենում և կապեր հաստատում Ավգուստ Բեբելի, Ֆրանց Մերինգի, Էդուարդ Ֆուքսի և միջազգային բանվորական շարժման այլ ականավոր գործիչների հետ։ «Գիտական պարապմունքներին զուգընթաց Շահումյանը շատ ժամանակ էր հատկացնում գերմանական սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդների՝ Բեբելի, Զինգերի, Լեդբուրի և մյուսների հրապարակային ելույթներին և գասախոսություններին»,— գրել է Ստ. Շահումյանի դասընկեր Միշա Մանուչարյանը։

1903 թ. գարնանը Ստ. Շահումյանը ծանոթանում առաջին անգամ հանդիպում է Վ. Ի. Լենինի հետ։ Հեղափոխական մաքի խոշորագույն տիտանի, Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի գործի մեծ շարունակողի՝ Վ. Ի. Լենինի հետ անձնական ծանոթությունը և սերտ մտերմությունը բացառիկ մեծ նշանակություն ունեցավ Ստ. Շահումյանի ամբողջ գիտակցական կյանքում։ Այդ ժամանակից սկսած Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի միջև հաստատվում է մշտական նամակագրություն, ջերմ բարեկամություն։ Ստ. Շահումյանը Վ. Ի. Լենինի համար դառնում է ուղղակի «Ստեփան», իսկ Վ. Ի. Լենինը Շահումյանի համար «թանկագին Իլյիչ»։

ՌՍԴԲԿ II համագումարից անմիջապես հետո Ստ. Շահումյանը անվերապահ կանգնում է բոլշևիզմի դիրքերի վրա, հեղափոխական բեղմնավոր աշխատանք է կատարում արտասահմանում, գլխավորում է ՌՍԴԲԿ Կենտկոմին կից ստեղծված հայերեն և վրացերեն լեզուներով մարքսիստական գրականություն հրատարակող հանձնաժողովի աշխատանքը։ Ստ. Շահումյանը աշխուժորեն արձագանքում է քաղաքական կարևորագույն հարցերին։ «Մեր տակտիկական տարաձայնությունները» նշանավոր ռեֆերատում (1903) նա վճռական հարված է հասցնում մարքսիզմի ռևիզիոնիստներին և ապացուցում է, որ կուսակցությունը ղեկավար և ուղղություն տվող ուժ է։ Ստ. Շահումյանը 1904 թ. հայերեն է թարգմանում և հրատարակում Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի առանձին աշխատություններ, այդ թվում՝ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ը, «Վարձու աշխատանք և կապիտալ», «Գյուղական չքավորությանը», «Ռուսաստանի պրոլետարիատին» և այլ աշխատություններ։

XX դարի սկզբին Ստեփան Շահումյանը, Բոգդան Կնունյանցը, Սուրեն Սպանդարյանը և նրանց շուրջը համախմբված պրոֆեսիոնալ հայ հեղափոխականներն իրենց մատերիալիստական աշխարհայացքով, դավանած գաղափարներով, անարատ ինտերնացիոնալիզմով՝ հիրավի մի նոր լուսավոր էջ են բացում հայ իրականության, հայկական կյանքի, հասարակական մտքի զարգացման պատմության մեջ։ Նրանք Հայաստանում մարքսիզմի տարածման լենինյան փուլի ռահվիրաներն են։

1904 թ. ապրիլին Ստ. Շահումյանը վերադառնում է Կովկաս՝ Թիֆլիս. ընտրվում ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի և նրա տպաբեր օրգան՝ «Պրոլետարիատի կռիվը» թերթի խմբագրական կոլեգիայի կազմում։ Անդրկովկասի բոլշևիկները նրան գիտեին որպես կայուն լենինյանի, սկզբունքային բոլշևիկի և մեծ գիտելիքներով օժտված մարքսիստի։ Արտասահմանում սովորելու տարիներին նա շարունակում էր սերտ կապ պահպանել Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների հետ, նրանց իրազեկ էր պահում Վ. Ի. Լենինի ցուցումներին։ Շահումյանի մասին 1928 թ. օգոստոսին գրած իր հիշողություններում Միխա Ցխակայան պատմում է, թե 1903 թ. վերջերին ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի նիստում, ծանոթանալով արտասահմանից եկած Ստ. Շահումյանի հետ, ասել է. «Թանկագին Սուրեն (նա իրեն այդպես կոչեց ձեռքս ուժեղ կերպով սեղմելու ժամանակ, ասում է Միխա Ցխակայան), քանի որ դու մեր ձեռքն ես ընկել այստեղ՝ Թիֆլիսում, նամանավանդ ծնունդով ու դաստիարակությամբ Թիֆլիսեցի ես, քեզ չենք թողնի վերադառնաս։ Չափազանց մեծ կարիք ունենք հայ աշխատողների...»։ Շահումյանը պատասխանեց. «Ընկեր Միխա, ես չափազանց գոհ եմ, որ դու ինձ օգտակար ես համարում այստեղի աշխատանքի համար։ Կաշխատեմ այդ արդարացնել շուտով։ Շատ շուտով ես կմիանամ ձեզ։ Միայն թե առաջ պիտի վերադառնամ Իլյիչի մոտ. չէ որ պարտավոր եմ նրան էլ իրազեկ դարձնել, թե ինչպիսի աշխատանք է եռում այստեղ՝ ձեզ մոտ։ Նա ամբողջապես կթևավորվի, որպես լեռնային արծիվ և կճախրի ձեզ վրա, Կովկասի վրա, ապրելով և ոգևորվելով ձեր անձնվեր աշխատանքով այդպիսի դժվար պայմաններում...»[10]։

Ստ. Շահումյանն իր խոստման համաձայն 1904 թ. ապրիլին վերադարձավ Կովկաս։ Զինված Վ. Ի. Լենինի ցուցումներով՝ նա ուղղություն էր տալիս Անդրկովկասի բոլշևիկների պայքարին, հետևողականորեն պաշտպանելով լենինյան կուսակցության գաղափարական և կազմակերպական հիմունքները, բոլշևիզմի տակտիկան և ստրատեգիան։ «Պրոլետարիատի կռիվը», «Պրոլետարիատի կռվի թերթիկ» և բոլշևիկյան մամուլի այլ օրգաններում Ստ. Շահումյանը հանդես է գալիս մարքսիստական բազմաթիվ փայլուն հոդվածներով։ Ուշագրավ է, օրինակ, «Պրոլետարիատի կռվի թերթիկ»-ի 1904 թ. հոկտեմբերի № 12—13-ում հրապարակված «Երևանից։ Հայ իրականությունից» խորագրով հոդվածը, որը նա գրել է հայ իրականությանը ծանոթանալուց հետո։ Հեղինակն այդ հոդվածում ցույց է տալիս, թե հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան ինչպես է իր ազդեցությունը տարածում հայկական գավառներում։

---

10 Միխա Ցխակայա, Անմոռանալի բարեկամ, ընկեր Ստեփան Շահումյանի հիշատակին (հիշողություններ), ՄԼԻ արխիվ, ֆ. 7, գ. 2, թ. 132։

Ինչպես ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին, այնպես էլ հեղափոխության տարիներին Ստ. Շահումյանը հետևողականորեն պաշտպանել է լենինյան տակտիկական գիծը, անհաշտ պայքար մղել մենշևիկների, էսէռների և բուրժուա-աղգայնական բոլոր հոսանքների դեմ։ Ստ. Շահումյանը միշտ հեղափոխական պայքարի առաջին գծումն էր։ Նա աչքի էր ընկնում իր կրակոտ ելույթներով, հրապարակախոսական և պրոպագանդիստական բեղմնավոր աշխատանքով։

1904—1906 թթ. Ստ. Շահումյանը շրջագայում է Անդրկովկասի արդյունաբերական կենտրոնները, Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, հանդես է գալիս բանվորների և գյուղացիների առջև, պարզաբանում բոլշևիկյան կուսակցության լենինյան տակտիկան, օգնում է սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ամրապնդմանը։ Նա ամբողջովին նետվում է ռուսական առաջին հեղափոխության հորձանուտը, պայքարում ինքնակալության դեմ՝ հանուն ժողովրդի ազատության։ Նրա անմիջական մասնակցությամբ 1905 թ. ՌՍԴԲԿ տարանջատ խմբակները Երևանում միավորվում են մեկ միասնական կազմակերպության՝ ՌՍԴԲԿ Երևանի քաղաքային կազմակերպության մեջ, դնում կուսակցության Երևանի կոմիտեի հիմքը։

1905 թ. նոյեմբերից սկսած Ստ. Շահումյանը խմբագրում է Թիֆլիսում հրատարակվող, Կովկասում առաջին բոլշևիկյան ամենօրյա լեգալ թերթը՝ «Կավկազսկի ռաբոչի լիստոկ»-ը, որը ՌՍԴԲԿ Կովկասյան միության IV կոնֆերանսում ճանաչվեց որպես Կովկասյան միության պաշտոնական օրգան։ «Կավկազսկի ռաբոչի լիստոկ»-ում են լույս տեսել Ստ. Շահումյանի «Մեր խնդիրները», «Ելիզավետպոլի դեպքերի առիթով», «Հեղափոխության նոր հաղթությունը», «Էվոլյուցիոնիզմն ու ռևոլյուցիոնիզմն հասարակական գիտության մեջ», «Ութժամյա բանվորական օրը և բանվորների պետական ապահովագրությունը», «Ազատությունները» կենսագործվում են», «Վերադարձ չկա» և այլ աշխատություններ ու հոդվածներ։ «Անհրաժեշտ է զինվել, զինվել և զինվել... Անհրաժեշտ է միաժամանակ զենքը սրել ժողովրդի գլխավոր թշնամու դեմ... Անհրաժեշտ է կարթագենը կործանել» — 1905 թ. նոյեմբերի 23-ին գրել է նա[11]։

1906—1907 թթ. Ստ. Շահումյանը Ս. Սպանդարյանի և Ս. Կասյանի հետ միասին հիմնադրում և խմբագրում է բոլշևիկյան «Կայծ», «Նոր խոսք» և «Օրեր» թերթերը, որոնք խոշոր դեր խաղացին հայ իրականության մեջ։ 1906 թ. ՌՍԴԲԿ Երևանի, իսկ 1907 թ. ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպությունները Ստ. Շահումյանին ընտրել են կուսակցության IV և V համագումարների պատգամավոր։ Համագումարներում նա հետևողականորեն պաշտպանել է լենինյան տակտիկան, իր ելույթներում մերկացրել մենշևիկներին, հատկապես կովկասյան մենշևիկների պարագլուխ Նոյ Ժորդանիային։

ՌՍԴԲԿ IV համագումարից վերադառնալով Թիֆլիս, Ստ. Շահումյանը մայիսի վերջին մեկնում է Երևան, ավելի քան մեկ շաբաթ անց է կացնում Երևանում, մոտիկից օգնում քաղաքի կուսակցական կազմակերպությանը, նրա անդամներին զինում Վ. Ի. Լենինի ցուցումներով։

---

11 Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, 1975, էջ 115, 116։

Լինելով ազգային հարցի խոշոր գիտակներից ու տեսաբաններից մեկը, դեռևս 1906 թ., նախ «Կայծ» թերթում, ապա առանձին գրքույկով Ստ. Շահումյանը հրատարակում է «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» նշանավոր աշխատությունը, որի մեջ քննարկում է ազգային հարցի դրվածքը՝ պրոլետարիատի, մասնավորապես Ռուսաստանի պրոլետարիատի հեղափոխական պայքարի խնդիրների հետ սերտորեն լծորդված։ Այդ աշխատությունը արժեքավոր ավանդ է ազգային հարցի մարքսիստական տեսության գանձարանում։ «Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստ»-ում «Սոցիալ-դեմոկրատիան և ազգային հարցը», «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին» (1914) և այլ աշխատություններում, ինչպես նաև Վ. Ի. Լենինին 1904—1918 թթ. գրած նամակներում նա մարքս-լենինյան բարձրակետից լուսաբանել է ազգային հարցը, տեսական-քաղաքական այդ պրոբլեմի մշակման գործում նեցուկ դարձել Վ. Ի. Լենինին։ Նա մերկացրել է բուրժուական ազգայնականներին, ցույց է տվել դաշնակցության բուրժուա-ազգայնական էությունը։

1907 թ. հունիսին Ստ. Շահումյանը ՌՍԴԲԿ V համագումարից վերադառնալով Կովկաս, կուսակցության կամքով փոխադրվում է Անդրկովկասի արդյունաբերական խոշորագույն կենտրոնը, Ռուսաստանի բանվորական շարժումների կարևորագույն օջախներից մեկը՝ Բաքու։ Այնտեղ են հավաքվում նաև բոլշևիկյան կուսակցության մի շարք այլ ականավոր գործիչներ։ Բաքվում Ստ. Շահումյանը կուսակցական-քաղաքական խոշոր աշխատանք է ծավալում, օգտագործում է լեգալ և անլեգալ բոլոր հնարավորությունները, խմբագրում է և ակտիվ աշխատակցում «Բակինսկի պրոլետարի», «Բակինսկի ռաբոչի», «Գուդոկ» և այլ թերթերին։

1907 թ. մինչև իր կյանքի վերջին օրերը Ստ. Շահումյանը հանդիսանում էր Բաքվի պրոլետարիատի սիրված ու ճանաչված առաջնորդը, Բաքվի բոլշևիկյան կազմակերպության մարտական ղեկավարը։ «Մի խոսքով,— ասել է Ա. Մյասնիկյանը,— Շահումյանը կովկասյան բոլշևիզմի արժանավոր պարագլուխն էր»[12]։

Ինչպես միշտ, ստոլիպինյան ռեակցիայի տարիներին ևս Ստ. Շահումյանը մնաց որպես անսասան, կայուն բոլշևիկ, բոցաշունչ հեղափոխական։ Բարձր պահելով լենինյանի կոչումը, քաղաքական վտարանդիության մեջ գտնվող Միխա Ցխակայային դրած նամակներում նա հայտնում էր. «...Մենք հաստատ համոզված ենք Իլյիչի դիրքորոշման ճշտության նկատմամբ...», «Մենք չենք վհատվում։ Հավատը դեպի ապագան և սերը դեպի մեր գործը անսպառ եռանդ են ներշնչում մեզ», «Մենք ամբողջովին Իլյիչի կողմն ենք»[13]։

Բաքվի պրոլետարիատի ուժերի համախմբման գործում հսկայական նշանակություն ունեցավ Ստ. Շահումյանի «Դեպի խորհրդակցություն բանվորական հինգ գարանտիաներով» աշխատությունը, որն առանձին գրքույկով լույս տեսավ 1908 թ.։ «Բանվորական կազմակերպությունները և ռեակցիան» առաջնորդող հոդվածում, որը լույս է տեսել «Բակինսկի ռաբոչի»-ի 1908 թ. № 7—8-ում, նա Բաքվի պրոլետարիատին հույս ու հավատ էր ներշնչում, կոչ

12 Մլի արխիվ, ֆ. 7։

13 Ստ. Շահումյան, Նամակներ, 1896—1918, Երևան, 1959, էջ 158—168։

անում՝ ոչ մի ջանք և եռանդ չխնայել բոլշևիկյան կազմակերպություններն ընդլայնելու և ամրապնդելու համար։ Մենք ներկայումս դնում ենք ապագայի հիմքը, ասում էր նա։

Ստ. Շահումյանը մարքսիստական հայ պարբերական մամուլի, գրականագիտության, քաղաքատնտեսության, պատմագիտության հիմնադիրներից էր, մարքսիստական հայ փիլիսոփայական մտքի նշանավոր երախտավորներից։ Իր աշխատություններում նա լուսաբանել է հայ ժողովրդի պատմության, հայ գրականության ու մշակույթի հարցերը, բարձր է գնահատել Խաչատուր Աբովյանի, Միքայել Նալբանդյանի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Հակոբ Հակոբյանի և այլոց ստեղծագործությունները։ 1910—1912 թթ. նա հանդես է գալիս մի շարք հոդվածներով, այդ թվում՝ «Ընթերցողի տարակուսանքը», «Գորկու մասին», «Մի քանի խոսք Լ. Ն. Տոլստոյի կրոնի մասին», որոնցում փայլուն կերպով պաշտպանել է գրականության կուսակցականության լենինյան սկզբունքը, մարքսիստական գրականագիտության դիրքերից գնահատել Լ. Տոլստոյի և Մ. Գորկու ստեղծագործությունները։

1911 թ. մարտին Բաքվում Ստ. Շահումյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Սովրեմեննայա ժիզն» թերթը, որի № 3-ում հրատարակվում է Վ. Ի. Լենինի «Մարքսիզմը և «Նաշա զարյա» հոդվածը՝ Վ. Իլյին ստորագրությամբ։ Վ. Ի. Լենինն այդ թերթին աշխատակցել էր Ստ. Շահումյանի խնդրանքով։

Ստ. Շահումյանն ակտիվ մասնակցություն է ունեցել ՌՍԴԲԿ VI (Պրագայի) կոնֆերանսի նախապատրաստմանը։ Կոնֆերանսում նա հեռակա կերպով ընտրվել է ՌՍԴԲԿ Կենտկոմի կազմում։

1911 թ. հոկտեմբերին Ստ. Շահումյանը ձերբակալվում է Բաքվում և մի քանի ամիս Բայիլովի բանտում պահվելուց հետո 1912 թ. հունիսին, Կովկասի փոխարքայի կարգադրությամբ, հինգ տարի ժամանակով արտաքսվում երկրամասի սահմաններից դուրս՝ Աստրախան։ Այստեղ նա շարունակում է իր հեղափոխական գործունեությունը, կապ է հաստատում տեղական բոլշևիկյան կազմակերպությունների հետ, աշխատակցում «Պրավդա»-ին, ջերմ նամակագրություն սկսում Վ. Ի. Լենինի հետ, խորհրդակցում կուսակցական բազմապիսի հարցերի, առանձնապես ազգային հարցի վերաբերյալ։ Նա կարճ ժամանակով անլեգալ մեկնում է Պետերբուրգ, աշխատում «Պրավդա»-ում։ Աքսորավայրում նրա գրած տեսական-քաղաքական աշխատություններից նշանավոր է «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» երկը, որը առաջին անգամ հրատարակվել է 1914 թ.։ 1914 թ. մայիսի 19-ի նամակում Վ. Ի. Լենինը Ստ. Շահումյանին առաջարկում է մարքսիստական «Պրոսվեշչենիե» ժուռնալի համար գրել «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» բրոշյուրի հեղինակային համառոտ շարադրանքը և առաջարկում մասնակցել ազգերի իրավահավասարության և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշպանության մասին դումայական օրենքի նախագծի մշակմանը։

1914 թ. մարտին Ստ. Շահումյանը Աստրախանի աքսորավայրից վերադառնալով Բաքու, գլխավորում է Բաքվի և Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը, շարունակում ջերմ նամակագրու-

թյունը Վ. Ի. Լենինի հետ։ 1915 թ. հոկտեմբերին նրա ղեկավարությամբ Բաքվում գումարվում է Կովկասի բոլշևիկների խորհրդակցություն, որը քննության առավ պատերազմի և ընթացիկ մոմենտի, ազգային, կազմակերպական և այլ հարցեր։ Բոլոր հիմնական հարցերի շուրջը ճառերով հանդես եկավ Ստ. Շահումյանը։ Խորհրդակցությունը ընտրեց ղեկավար կուսակցական կենտրոն՝ ՌՍԴԲԿ Կովկասյան բյուրո՝ Ստ. Շահումյանի գլխավորությամբ։

Ստ. Շահումյանի համար ամեն բանից թանկ էին Վ. Ի. Լենինի խորհուրդները. 1915 թ. նոյեմբերի 1-ին Վ. Ի. Լենինին հղած նամակում նա գրել է. «Ձեր նամակները, խորհուրդները և ցուցումները ինձ համար միշտ ամեն բանից թանկ են եղել... —Դուք ուզում եք իմանալ, թե ես ինչ եմ մտածում և ինչ եմ անում։ Կարծես այս անգամ էլ Ձեզ հետ միանման եմ մտածում»[14].

Հեղափոխական գործունեության համար Ստ. Շահումյանը ցարիզմի կողմից անընդհատ հալածվել է, մի քանի անգամ բանտարկվել և աքսորվել։ 1916 թ. մարտի 7-ին նա Գրոզնիում ձերբակալվում և էտապով փոխադրվում է Բաքու՝ Բայիլովի բանտ, որտեղ մնում է մինչև դեկտեմբեր, ապա աքսորվում Սարատովի նահանգ։

Ստ. Շահումյանը Բաքվի բանտից շարունակում էր իր հեղափոխական գործունեությունը։ Նա բազմաթիվ հոդվածներ է գրում «Պայքար» թերթի համար։ Առանձնապես արժեքավոր են նրա «Մեր Սուրենը», «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը», «Վերջին դեպքերը Գերմանիայում», «Հայ գրականության ժողովածուի մասին» և այլ հոդվածներ։

1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից անմիջապես հետո Ստ. Շահումյանը Սարատովի աքսորից վերադառնում է Բաքու, բեղմնավոր գործունեություն ծավալում։ Նա ճանապարհին իմանում է, որ չնայած մենշևիկների, էսէռների, մուսավաթականների և դաշնակցականների դավաճանական քաղաքականությանը, չնայած նրանց կատաղի դիմադրությանը, Բաքվի պրոլետարիատը հեռակա կարգով իրեն ընտրել է բանվորների ու զինվորների դեպուտատների Բաքվի սովետի նախագահ։ Իր շուրջը համախմբելով աննկուն լենինյաններ Պ. Ջափարիձեին, Մ. Ազիզբեկովին, Ի. Ֆիոլետովին, Յա. Զևինին, Գ. Կորգանովին և մյուսներին, Ստ. Շահումյանը Վ. Ի. Լենինի Ապրիլյան հռչակավոր թեզիսների լույսի տակ գլխավորում է Անդրկովկասի պրոլետարիատի պայքարը՝ հանուն սովետական իշխանության հաղթանակի։ Իր ամբողջ հեղափոխական եռանդը, քաղաքական ղեկավարի և կազմակերպչի իր ողջ տաղանդը 1917—1918 թթ. նա նվիրաբերում է Անդրկովկասում մեծ Հոկտեմբերի հաղթանակի համար մղվող պայքարին, պսակազերծում համաձայնողական կուսակցությունների հակաժողովրդական քաղաքականությունը։

1917—1918 թթ. Ստ. Շահումյանի կյանքի և գործունեության ամենաբեղմնավոր տարիներն են։ Այդ ժամանակ փայլուն կերպով դրսևորվում են նրա ոչ միայն քաղաքական ու կուսակցական, այլև լենինյան տիպի պետական գործչի կարողությունները։ 1917 թ. հունիսին նա մեկնում է Պետրոգրադ և մասնակցում բանվորների ու զինվորների դեպուտատների սովետների համառուսաստանյան I համագումարին։ Նա ընտրվում է սովետների համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի անդամ։ Կուսակցության VI

---

[14] Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1978, էջ 14։

համագումարը նրան հեռակա կարգով ընտրում է Ռկ(բ)կ Կենտկոմի անդամ, իսկ հետո՝ Կենտկոմի նեղ կազմում։ Պետրոգրադում Ստ. Շահումյանը սեպտեմբերին մասնակցում է Կենտկոմի այն նիստերին, որտեղ քննարկվում են զինված ապստամբության մասին Վ. Ի. Լենինի պատմական նամակները։ Ստ. Շահումյանը հանգես էր գալիս կրակոտ ճառերով ու հոդվածներով, որոնց մեջ մերկացնում էր ժամանակավոր կառավարությանը, հակահեղափոխական կուսակցությունների դավաճանական գործելակերպը։ «Ընկեր Շահումյանին՝ Ստեփանին, որը ահագին ազդեցություն ուներ Բաքվի պրոլետարիատի վրա,— իր հիշողություններում պատմում է Ն. Կրուպսկայան,— մենք վաղուց էինք ճանաչում... Իլյիչը 1917 թվականին ուրախ էր տեսնվելու Ստեփանի հետ և խոսելու ընդհուպ այն բոլոր խնդիրների մասին, որոնք այնպես հատու կերպով ծառացել էին բոլշևիկների առաջ»[15]։

1917 թ. դեկտեմբերի 16-ին Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների սովետը Վ. Ի. Լենինի նախագահությամբ քննարկում է Կովկասում ստեղծված դրությունը և որոշում է Ստ. Շահումյանին նշանակել Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար։ Անդրկովկասի բանվորները, գյուղացիներն ու զինվորները բուռն գոհունակությամբ դիմավորեցին Ստ. Շահումյանին Կովկասի գործերի արտակարգ կոմիսար նշանակելը։ Նա մեծ աշխատանք է կատարում, հաճախակի հանդես գալիս բանվորների, զինվորների առջև, մասնակցում կուսակցական կազմակերպությունների ժողովներին։ Նա իր հեղափոխական ողջ եռանդն ու կորովը ներդնում է կուսակցության առաջադիր խնդրի կատարմանը, փայլուն կերպով դրսևորում է քաղաքական գործչի աշխատանքի լենինյան ոճն ու մեթոդները։ Նրա գլխավորությամբ 1918 թ. ապրիլի 1-ին Բաքվում հաղթանակում է սովետական իշխանությունը, ստեղծվում է Բաքվի հերոսական կոմունան, երկրամասի պրոլետարիատի ազատագրական պայքարի պսակը։ Պարտություն կրած մուսավաթական բանդաները նահանջում և ամրանում են Ելիզավետպոլում։ Օժանդակություն ստանալով Վրաստանից ու Դաղստանից, նրանք հարձակում են սկսում Բաքվի վրա։ Այսպիսով, հենց նոր ստեղծված Բաքվի կոմունան ստիպված էր պայքարել երկու ճակատում՝ ներքին և արտաքին թշնամու դեմ։

1918 թ. ապրիլի 25-ին Բաքվի սովետը ստեղծում է Ժողովրդական կոմիսարների խորհուրդ՝ Ստ. Շահումյանի նախագահությամբ։ Կոմունայի հաստատումից անմիջապես հետո նա ժողովրդական կոմիսարների խորհրդին զեկուցում է ստեղծված իրադրության մասին, նշելով, որ Անդրկովկասը թևակոխել է սովետական իշխանության համար մղվող զինված ակտիվ պայքարի ժամանակաշրջան։

Բաքվի Ժողկոմխորհը իր դեկլարացիայում ազդարարեց, որ ինքը «ամենասերտ կապով կապված կլինի Համառուսաստանյան կենտրոնական իշխանության հետ, և հարմարվելով տեղական պայմաններին կենսագործելու է Ռուսաստանի բանվորա-գյուղացիական կառավարության՝ ժողովրդական կոմիսարների խորհրդի բոլոր դեկրետներն ու կարգադրությունները»[16]։

Կարճ ժամանակամիջոցում Բաքվի կոմունան թշնամիների դեմ մղած դաժան պայքարում իրականացրեց մի ամբողջ շարք սոցիալիստական միջո-

---

15 Ն. Կ. Կրուպսկայա, Հիշողություններ, Մոսկվա, 1930, էջ 508, 510։

16 Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Երևան, 1978, էջ 228։

ցառումներ՝ ստեղծեց կարմիր բանակ, ազգայնացրեց նավթարդյունաբերությունը, բանկերը, առևտրական նավատորմը, կալվածատերերից ու բեգերից բռնագրավեց հողը՝ հօգուտ գյուղացիության, վերացրեց հին դատարանը և ստեղծեց տեղական ժողդատարաններ, կազմակերպեց ժողովրդական կրթության գործը և այլն։ Ստ. Շահումյանը Բաքվի պրոլետարիատին կոչ էր անում ամրապնդել հեղափոխության նվաճումները, պատրաստվել հակահարված տալու նենգ և խարդախ թշնամուն։

Բաքվի կոմունան շարունակում էր հերոսաբար դիմադրել օտարերկրյա զավթիչներին և մուսավաթական ու այլ հակահեղափոխական բանդաներին։ Ստ. Շահումյանը կարմիր գվարդիայի և կարմիր բանակի կազմակերպիչներից էր։ Իբրև ռազմա-հեղափոխական խորհրդի և Բաքվի պաշտպանության հեղափոխական խորհրդի անդամ, նա ակտիվ դեր է կատարել քաղաքացիական կռիվների և օտարերկրյա ինտերվենցիայի ջախջախման գործում։ Ղեկավարվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, Ստ. Շահումյանն ու նրա զինակիցները դիվանագիտորեն օգտագործում էին իմպերիալիստական պետությունների և ներքին հակահեղափոխական ուժերի միջև եղած հակասությունները։ Հավանություն տալով Բաքվի բոլշևիկների քաղաքականությանը, ողջունելով նրանց ակտիվ հեղափոխական պայքարը, Վ. Ի. Լենինը 1918 թ. մայիսի 14-ին գրել է. «Թանկագին ընկեր Շահումյան։ Շատ շնորհակալ եմ նամակի համար։ Մենք հրճվանքի մեջ ենք Ձեր հաստատակամ և վճռական քաղաքականությունից։ Կարողացեք դրան միացնել այն ամենազգույշ դիվանագիտությունը, որն անպայման թելադրվում է այժմյան դժվարադույն դրությամբ, և մենք կհաղթենք»[17]։

Ներքին հակահեղափոխական ուժերը և օտարերկրյա իմպերիալիստները 1918 թ. ամռանը կոմունայի համար ստեղծեցին ծանր վիճակ։ Քաղաքական այդ բարդ և դժվարին պայմաններում Ստ. Շահումյանը և նրա ընկերները վարում էին բոլշևիկյան տակտիկական գիծ։ Վ. Ի. Լենինը 1918 թ. հուլիսի 29-ին իր ճառերից մեկում Բաքվի կոմունայի քաղաքականության մասին ասել է. «Անգլո-ֆրանսիական իմպերիալիստների հետ որևէ համաձայնություն կնքելուց վճռականորեն հրաժարվելը Բաքվի ընկերների միակ ճիշտ քայլն է, քանի որ չի կարելի նրանց հրավիրել, առանց ինքնուրույն սոցիալիստական իշխանության, թեկուզ և կտրված տերիտորիայում, վերածելու իմպերիալիստական պատերազմի ստրուկի»[18]։

Կոմունարներին չհաջողվեց մինչև վերջ պաշտպանել Բաքուն։ 1918 թ. հուլիսի 31-ին սովետական իշխանությունը Բաքվում ժամանակավորապես ընկավ։ Ստ. Շահումյանը և նրա մարտական ընկերները ձերբակալվեցին։

Ստ. Շահումյանն իր կյանքի վերջին օրերին դրած հոդվածներում և կոչերում մինչև վերջ մերկացրեց Անդրկովկասի հակահեղափոխական կուսակցություններին և նրանց տերերին, ցույց տվեց նրանց նողկալի կերպարանքը։ 1918 թ. օգոստոսի 12-ին նա Բաքվի բանվորներին ուղղված կոչում, նկարագրելով ստեղծված ծանր դրությունը, նշում էր, որ բանվորա-գյուղացիական Ռուսաստանը դեռ կգա Բաքու։ Բաքվի պրոլետարիատը նորից կկանգնի Սովետական Սոցիալիստական Հանրապետության դրոշի տակ։ Բաքվի կո-

17 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 359։
18 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 9։

մունայի ծանր օրերին Վ. Ի. Լենինն անհանգստացած հետաքրքրվում էր Ստ. Շահումյանի ճակատագրով, հայտարարելով՝ «Դուք գիտեք, որ ես լիովին վստահում եմ Շահումյանին»[19]։

1918 թ. սեպտեմբերի 20-ին Անդրկասպյան ավազուտներում անգլիական ինտերվենտների և էսէռական դահիճների ձեռքով ընկան Ստ. Շահումյանը և նրա մարտական 25 ընկերները։

Նորահայտ նյութերը մեկ անգամ ևս բացահայտում են Բաքվի 26 կոմիսարների չարանենգ սպանության գործում անգլիական իմպերիալիստների, հատկապես նրանց էմիսարներ Ու. Մալեսոնի, Տիդ-Ջոնսի և այլոց անձնական մասնակցությունն ու վայրագությունները, հավաստում սովետական գրականության մեջ մինչև այդ արված եզրակացությունների ստուգությունը։ Հրապարակված փաստաթղթերից պարզվում է, որ կոմիսարների ձերբակալման մասին հաղորդումը գեներալ Ու. Մալեսոնը գնդապետ Բատտինից ստացել էր սեպտեմբերի 17-ին, այսինքն հենց նույն օրը, երբ նրա կողմից Կրասնովոդսկ էր ուղարկվել որպես անգլիական ռազմական միսիայի ղեկավար։ Այդ մասին իր հետագա հաղորդումներում Ու. Մալեսոնը փաստորեն ընդունել է, որ հենց «իրենք էին ձերբակալել բոլշևիկյան լիդերներին»։ Սա նմանօրինակ առաջին վկայությունն է, և խիստ կարևոր է, քանի որ կոմիսարների ճակատագրի համար պատասխանատվությունը երբեք չի կարելի հեռացնել նրանց ձերբակալողների վրայից։ Դեռ ավելին, հենց այդ փաստաթուղթը լույս է սփռում այն բանի վրա, թե անգլիական իմպերիալիստներն ինչ ձևով էին ուզում լուծել կոմիսարների ճակատագիրը. չէ՞ որ Անդրկասպիայում կոմիսարների ներկայությունը հայտարարվել էր «արտակարգ վտանգավոր»։ Հետագա փաստաթղթերից պարզվում է, որ Ու. Մալեսոնի 1918 թ. սեպտեմբերի 18-ի հաղորդումը Բաքվի կոմիսարների ձերբակալման մասին, և նույն այդ հեռագրում պարունակվող առաջարկությունը՝ նրանց որպես պատանդների Հնդկաստան տեղափոխման մասին ոչ այլ ինչ էին, եթե ոչ մի խորամանկ հնարանք։ Ու. Մալեսոնի մոտ արդեն հաստատուն կերպով հասունացել էր հանցագործ ծրագիր, թե ինչպես պետք է վարվել Կրասնովոդսկում իր ենթակաների կողմից ձերբակալված կոմիսարների հետ[20]։

Ստ. Շահումյանն ապրեց ընդամենը 40 տարի։ Եվ ինչպիսի նվիրական ու սխրալի գործեր, ինչպիսի գրական հարուստ ժառանգություն թողեց նա սերունդներին։ Նրա այդ ժառանգությունը սովետական իշխանության տարիներին լույս է տեսել հարյուր-հազարավոր օրինակ տպաքանակով։

Հեղափոխության փոթորկածին Ստ. Շահումյանը հայ ժողովրդի պարծանքն է, նրա քաղաքական իղձերի վառ արտահայտիչը։ Նա հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը, Հայաստանի հեղափոխական շարժումները լծորդում էր համառուսական պրոլետարիատի հեղափոխական պայքարին։ Այն գործը, որին նվիրաբերել է իր կյանքը Ստ. Շահումյանը, փայլուն կերպով հաղթանակել է։

— Ես լենինյան եմ,—բազմիցս գրել և ասել է Ստ. Շահումյանը։ Հիրավի, նա իր ամբողջ գիտակցական կյանքում մնաց որպես հավատարիմ լենինյան։

---

19 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 330։

20 «Նոր նյութեր Բաքվի 26 կոմիսարների մասին» («Դիտաինֆորմացիոն բյուլետեն», Երևան, 1974, էջ 11—14)։